ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

19 հուլիսի 2023 թվական թիվ 84-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ, ՏԵՂԻ, ԿԱՐԳԻ ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՆՄՈՒՇԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.3 հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության քվեարկությունն անցկացնել 2023 թվականի հուլիսի 19-ին, ժամը՝ 12:30-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի նիստերի դահլիճում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի 42 շենք, 3-րդ հարկ, նիստերի դահլիճ):

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության քվեաթերթիկի նմուշը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության քվեարկության կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -1

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Կ. ԱՐՇԱԿՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Հ. ՆԱՎՈՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Հ. ՈՍԿԱՆՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Է. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԱՐՇԱԿՅԱՆ**
/փոխարինող/

19 հուլիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան
համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 19-ի
թիվ 84-Ա որոշման

ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՆՄՈՒՇ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ

19.07.2023թ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

			Կողմ եմ	Դեմ եմ
1	Մանուկյան Զավեն Աշոտի	«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն		

(ավագանու անդամի անուն ազգանուն հայրանուն) (ստորագրություն)

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի
հուլիսի 19-ի թիվ 84-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ (ՆԵՐԻ) 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու անդամը քվեարկությանը մասնակցում է անձամբ:
2. Մոտենում է հանձնաժողովի գրանցումն իրականացնող անդամին, ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթը, տվյալ դեպքում անձնագիրը, կամ ավագանու վկայականը, ընտրողների ցուցակում ստորագրում է իր անվան դիմաց, այնուհետև քվեարկողը հանձնաժողովի քվեաթերթիկներ հատկացնող անդամից ստանում է իր քվեաթերթիկը, սահմանված վայրում կատարում է քվեարկություն և քվեարկած քվեաթերթիկը գցում է քվեաթերթիկների համար նախատեսված արկղի մեջ և հեռանում:
3. Քվեաթերթիկում քվեարկողը կատարում է **V** նշանը, այն թեկնածուի ազգանվան անվան հայրանվան դիմացի վանդակում, որին ցանկանում է կողմ քվեարկել, իսկ մեկ թեկնածուի դեպքում՝ կողմ կամ դեմ վանդակում:
4. Եթե քվեարկողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել, կամ վնասել է, ապա նա կարող է դիմել հանձնաժողովի անդամին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար (դրա համար մեզ մոտ առկա է 3 հատ լրացուցիչ քվեաթերթիկ), հանձնաժողովի անդամը անհրաժեշտության դեպքում քվեարկողին կարող է նոր քվեաթերթիկ հատկացնել, քվեարկողների ցուցակում այդ մասին նշում կատարելով տվյալ քվեարկողի անվան դիմաց: Սխալ լրացված քվեաթերթիկը անհապաղ մարվում է, իսկ մարումը կատարվում է քվեաթերթիկի աջ կամ ձախ կողմի ներքևի անկյունից կտրելու միջոցով, այնպես, որ չվնասվեն քվեաթերթիկի հետևի կողմում առկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները:
5. Սահմանված նմուշի քվեաթերթիկը համարվում է անվավեր,

եթե

- մեկից ավելի թեկնածուի օգտին նշումներ է պարունակում,
- չի պարունակում որևէ նշում,
- սահմանված կարգով ստորագրված չէ,
- պարունակում է այլ գրառումներ

6. Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող քվեաթերթիկի անվավերության հիմք հանդիսանալ, եթե քվեարկողի մտադրությունը հստակ է և աներկբա:
7. Չսահմանված նմուշի և անվավեր քվեաթերթիկները ևս անհապաղ մարվում են և տեսակավորվում առանձին:
8. Արկղում առկա բոլոր քվեաթերթիկները հանելուց հետո հանձնաժողովի անդամները տեսակավորում են մեկ առ մեկ հաշվարկում յուրաքանչյուր թեկնածուի օգտին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը:
9. Այս բոլոր գործողությունները կատարելուց հետո հանձնաժողովը կազմում է արձանագրություն և ներկայացնում համայնքի ավագանուն: